

**Սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլումների մասին
(հիմնված Համաձայնագրի հոդված 54«3»«ե»-ի վրա)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը և, մասնավորապես, դրա հոդված 54«3»«ե»-ն,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ հոդված 54«3»«ե»-ով և Հիմնադրման ազատության սահմանափակումների վերացման մասին ընդհանուր ծրագրով նախատեսված համաձայնեցմանը(4) սկիզբ դրվեց թիվ 68/151/ԵՏՀ (5) հրահանգով,

քանի որ սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների ստեղծման և նրանց կապիտալի պահպանման և փոփոխման մասով այդ համաձայնեցումը շարունակվեց թիվ 77/91/ԵՏՀ (6) հրահանգով, իսկ որոշակի տեսակի ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների մասով՝ թիվ 78/660/ԵՏՀ (7) հրահանգով,

քանի որ մասնակիցների և երրորդ անձանց շահերի պաշտպանությունը պահանջում է սահմանափակ պատասխանատվությամբ բաց ընկերությունների միաձուլումների մասին անդամ պետությունների օրենքների համապատասխանեցում և անդամ պետությունների օրենքներում միաձուլումների մասին դրույթի ներմուծում,

քանի որ նշված համաձայնեցման համատեքստում, մասնավորապես, կարևոր է, որ միաձուլվող ընկերությունների բաժնետերերը համապատասխան չափով հնարավորինս օբյեկտիվորեն տեղեկացվեն, և որ նրանց իրավունքները պատշաճ կերպով պաշտպանվեն,

քանի որ կազմակերպությունների, ձեռնարկությունների կամ դրանց մի մասի փոխանցման դեպքում աշխատողների իրավունքների պաշտպանությունը ներկայումս կարգավորվում է 77/187/ԵՏՀ (8) հրահանգով,

քանի որ պարտատերերը, այդ թվում՝ չապահովված պարտատոմսերի սեփականատերերը, ինչպես նաև միաձուլվող ընկերության նկատմամբ այլ պահանջներ ունեցող անձինք պետք է պաշտպանված լինեն այնպես, որպեսզի ընկերությունների միաձուլմամբ չտոնահարվեն նրանց շահերը,

քանի որ 68/151/ԵՏՀ հրահանգով նախատեսված հրապարակման պահանջները պետք է տարածվեն նաև միաձուլումների վրա՝ երրորդ անձանց համապատասխան չափով տեղյակ պահելու նպատակով,

քանի որ ընկերությունների միաձուլումների շրջանակներում մասնակիցներին և երրորդ անձանց տրվող երաշխիքները պետք է տարածվեն նաև ընկերությունների միաձուլմանը մի շարք կարևոր առումներով նման իրավական պրակտիկայի վրա՝ բացառելու նշված շահերի պաշտպանությունն ապահովելու պարտականությունից խուսափելու հնարավորությունը, (1)ՊՏ թիվ C 89, 14.7.1970թ., էջ 20: (2)ՊՏ թիվ C 129, 11.12.1972թ., էջ 50; ՊՏ թիվ C 95, 28.4.1975թ., էջ 12: (3)ՊՏ թիվ C 88, 6.9.1971թ., էջ 18: (4) ՊՏ թիվ 2, 15.1.1962թ., էջ 36/62: (5)ՊՏ թիվ L 65, 14.3.1968թ., էջ 8: (6)ՊՏ թիվ L 26, 31.1.1977թ., էջ 1: (7) ՊՏ թիվ L 222, 14.8.1978թ., էջ 11: (8)ՊՏ թիվ L 61, 5.3.1977թ., էջ 26:

քանի որ նշված ընկերությունների, դրանց և երրորդ անձանց, ինչպես նաև մասնակիցների միջև հարաբերություններին վերաբերող օրենքի հստակություն ապահովելու նպատակով՝ ընկերությունների գրանցման անվավերության դեպքերը պետք է սահմանափակվեն՝ սահմանելով, որ թերությունները, որտեղ հնարավոր է, վերացվեն և սահմանափակվի այն ժամանակահատվածը, որի ընթացքում կարող է ընկերությունների գրանցումն անվավեր ճանաչելու վարույթ հարուցվել,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1. Գործողության ոլորտը

1. Սույն հրահանգով սահմանված համաձայնեցման միջոցները տարածվում են հետևյալ տեսակի ընկերությունների մասին անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի, վարչական ակտերի վրա՝

Գերմանիա՝ die Aktiengesellschaft,

Բելգիա՝ la societe anonyme / de naamloze vennootschap,

Դանիա՝ aktieselskaber,

Ֆրանսիա՝ la société anonyme,

Իռլանդիա՝ public companies limited by shares, and public companies limited by guarantee having a share capital

Իտալիա՝ la società per azioni,

Լյուքսեմբուրգ՝ la société anonyme,

Նիդերլանդներ՝ de naamloze vennootschap,

Միացյալ Թագավորություն՝ public companies limited by shares, and public companies limited by guarantee having a share capital.

2. Անդամ պետությունները կարող են չկիրառել սույն Հրահանգն այն կոռպորատիվների նկատմամբ, որոնք գրանցված են որպես 1-ին պարբերությունում թվարկված ընկերությունների տեսակներից մեկը: Քանի դեռ անդամ պետությունների օրենքներում օգտագործվում է այս տարբերակը, դրանք պետք է պահանջեն, որ նման ընկերությունները թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 4-րդ հոդվածում նշված իրենց բոլոր փաստաթղթերում ներառեն «կոռպորատիվ» բառը:

3. Անդամ պետությունները կարող են չկիրառել սույն Հրահանգն այն դեպքերում, երբ ընկերությունները, որոնք ձեռք են բերվում մեկ այլ ընկերության կողմից կամ, որոնց գոյությունը դադարելու է, ընդգրկված են սնանկության վարույթում, անվճարունակ ընկերությունների գործունեության դադարման հետ կապված վարույթում, դատարանի կողմից կիրառվող վճարունակության վերականգնմանն ուղղված միջոցառումների, պարտատերերի պահանջների բավարարման սառեցման (մորատորիում) հետ կապված և նմանատիպ վարույթներում:

ԳԼՈՒԽ I. Մեկ այլ ընկերության կողմից մեկ կամ ավելի ընկերությունների ձեռքբերման միջոցով միաձուլման և նոր ընկերության ստեղծման միջոցով միաձուլման կարգավորումը

Հոդված 2

Անդամ պետություններն իրենց ներպետական իրավունքով կարգավորվող ընկերությունների մասով նախատեսում են մեկ այլ ընկերության կողմից մեկ կամ ավելի ընկերությունների ձեռքբերման միջոցով միաձուլումը և նոր ընկերության ստեղծման միջոցով միաձուլումը կարգավորող նորմեր:

Հոդված 3

1. Սույն Հրահանգի իմաստով՝ «ձեռքբերման միջոցով միաձուլում» նշանակում է գործողություն, որի միջոցով մեկ կամ ավելի ընկերությունների գործունեությունը դադարում է առանց լուծարման գործընթացի և որոնք իրենց բոլոր ակտիվներն ու պարտավորությունները փոխանցում են մեկ այլ ընկերության՝ փոխարենը ձեռք բերող ընկերությունում ձեռք բերվող ընկերության կամ ընկերությունների բաժնետերերին տրամադրելով բաժնետոմսեր և, առկայության դեպքում, կանխիկ վճարում, որը չի գերազանցում նրանց համար թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքի 10%-ը, իսկ անվանական արժեքի բացակայության դեպքում՝ դրանց հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքը:

2. Անդամ պետության օրենքները կարող են նախատեսել, որ ընկերությունների ձեռքբերման միջոցով միաձուլում կարող է նաև տեղի ունենալ, եթե ձեռք բերվող մեկ կամ ավելի ընկերությունները գտնվում են լուծարման գործընթացում՝ պայմանով, որ այս տարբերակը կիրառվում է միայն այն ընկերությունների նկատմամբ, որոնք դեռևս չեն սկսել իրենց ակտիվների բաշխումը իրենց բաժնետերերի միջև:

Հոդված 4

1. Սույն Հրահանգի իմաստով՝ «նոր ընկերություն ստեղծելու միջոցով միաձուլում» նշանակում է գործողություն, որի միջոցով մի շարք ընկերությունների գործունեությունը դադարում է առանց լուծարման գործընթացի և, որոնք փոխանցում են իրենց բոլոր ակտիվներն ու պարտավորությունները իրենց կողմից ստեղծվող մեկ այլ ընկերության՝ փոխարենը իրենց բաժնետերերին նոր ընկերությունում տրամադրելով բաժնետոմսեր և, առկայության դեպքում, կանխիկ վճարում, որը չի գերազանցում նրանց համար թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքի 10%-ը, իսկ անվանական արժեքի բացակայության դեպքում՝ դրանց հաշվապահական հաշվեկշռում արտացոլված անվանական արժեքը:

2. Անդամ պետության օրենքներով կարող է նախատեսվել, որ նոր ընկերություն ստեղծելու միջոցով միաձուլում կարող է նաև տեղի ունենալ, եթե իրենց գոյությունը դադարեցնող մեկ կամ ավելի ընկերություններ գտնվում են լուծարման գործընթացում՝ պայմանով, որ այս տարբերակը կիրառվում է միայն այն ընկերությունների նկատմամբ, որոնք դեռևս չեն սկսել իրենց ակտիվների բաշխումը բաժնետերերի միջև:

ԳԼՈՒԽ II. Միաձուլումը ձեռքբերման միջոցով

Հոդված 5

1. Միաձուլվող ընկերությունների վարչական կամ կառավարման մարմինները պետք է գրավոր ձևակերպեն միաձուլման նախնական պայմանները:

2. Միաձուլման նախնական պայմանները ներառում են առնվազն.

ա) միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի տեսակը, անվանումը և գտնվելու վայրը.

բ) բաժնետոմսերի փոխարկման հարաբերակցությունը և ցանկացած կանխիկ վճարման չափը.

գ) ձեռք բերող ընկերությունում բաժնետոմսերի բաշխմանը վերաբերող պայմանները.

դ) օրը, որից հետո նշված բաժնետոմսերի սեփականատեր լինելը բաժնետերերին շահույթից մաս ստանալու իրավունք է վերապահում, ինչպես նաև այդ իրավունքի վրա ազդող ցանկացած հատուկ պայման.

ե) օրը, որից հետո ձեռք բերվող ընկերության գործարքները հաշվապահական հաշվառման նպատակներով դիտարկվում են որպես ձեռք բերող ընկերության գործարքներ.

զ) ձեռք բերող ընկերության կողմից հատուկ իրավունքներ տվող բաժնետոմսերի և բաժնետոմսերից բացի այլ արժեթղթերի սեփականատերերին վերապահված հատուկ իրավունքները կամ նրանց վերաբերյալ առաջարկված միջոցառումները.

է) հոդված 10«1»-ում նշված փորձագետներին և միաձուլվող ընկերությունների վարչական, կառավարման, վերահսկիչ կամ հսկիչ մարմինների անդամներին տրամադրված ցանկացած հատուկ արտոնություն:

Հոդված 6

Միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի դեպքում միաձուլման մասին նախնական պայմանները պետք է հրապարակվեն յուրաքանչյուր անդամ պետության օրենքներով սահմանված կարգով՝ թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն, միաձուլման մասին որոշում կայացնելու նպատակով ընդհանուր ժողովի հրավիրման համար սահմանված օրվանից առնվազն մեկ ամիս առաջ:

Հոդված 7

1. Միաձուլման համար առնվազն անհրաժեշտ է ընկերություններից յուրաքանչյուրի ընդհանուր ժողովի հավանությունը: Անդամ պետությունների օրենքներով նախատեսվում է, որ նման որոշում կայացնելու համար պահանջվում է բաժնետոմսերի կամ ներկայացված տեղաբաշխված կապիտալի նկատմամբ սեփականության իրավունքից բխող ձայների առնվազն երկու երրորդը:

Այնուամենայնիվ, անդամ պետությունների օրենքներով կարող է նախատեսվել, որ առաջին ենթապարբերությունում նշված ձայների պարզ մեծամասնությունը բավարար է, երբ ներկայացված է տեղաբաշխված կապիտալի առնվազն կեսը: Ավելին, անհրաժեշտության դեպքում կիրառվում են ընկերության հիմնադիր պայմանագրի և կանոնադրության փոփոխությունները կանոնակարգող նորմերը:

2. Բաժնետոմսերի մեկից ավելի դասի առկայության դեպքում միաձուլման մասին որոշումը պետք է քվեարկվի առնվազն այն բաժնետերերի յուրաքանչյուր դասի կողմից, որոնց իրավունքների վրա ազդում է գործարքը:

3. Որոշումն ընդգրկում է թե՛ միաձուլման նախնական պայմանների, և թե՛ միաձուլմամբ պայմանավորված՝ հիմնադիր պայմանագրում և կանոնադրությունում կատարված ցանկացած փոփոխության հաստատումը:

Հոդված 8

Անդամ պետության օրենքները կարող են ձեռք բերող ընկերության ընդհանուր ժողովի կողմից միաձուլման հաստատման պահանջ չնախատեսել, երբ բավարարված են հետևյալ պայմանները.

ա) ձեռք բերող ընկերության համար 6–րդ հոդվածով նախատեսված հրապարակումը պետք է իրականացվի միաձուլման նախնական պայմանների շուրջ որոշում կայացնելու նպատակով հրավիրված՝ ձեռք բերվող ընկերության կամ ընկերությունների ընդհանուր ժողովի հրավիրման համար սահմանված օրվանից առնվազն մեկ ամիս առաջ,

բ) «ա» կետով սահմանված օրվանից առնվազն մեկ ամիս առաջ ձեռք բերող ընկերության բոլոր բաժնետերերը պետք է իրավունք ունենան այդ ընկերության գտնվելու վայրում ուսումնասիրել հոդված 11«1»-ում նշված փաստաթղթերը,

գ) տեղաբաշխված կապիտալի նվազագույն տոկոս ունեցող ձեռք բերող ընկերության մեկ կամ ավելի բաժնետերերը պետք է իրավունք ունենան պահանջելու ձեռք բերող ընկերության ընդհանուր ժողով հրավիրել՝ միաձուլման հաստատման վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով: Տեղաբաշխված կապիտալի նվազագույն տոկոսը չպետք է գերազանցի հինգ տոկոսը: Այնուամենայնիվ, անդամ պետությունները կարող են նախատեսել, որ այս հաշվարկում չեն ներառվում չքվեարկող բաժնետոմսերը:

Հոդված 9

Միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի վարչական կամ կառավարման մարմինները կազմում են ամփոփ գրավոր զեկույց, որում բացատրվում են միաձուլման նախնական պայմանները և սահմանվում են դրանց իրավական և տնտեսական հիմքերը, մասնավորապես՝ բաժնետոմսերի փոխարկման հարաբերակցությունը:

Զեկույցում ներկայացվում է նաև գնահատման ընթացքում առաջացած ցանկացած հատուկ դժվարություն:

Հոդված 10

1. Միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի անունից, սակայն դրանցից անկախ գործող մեկ կամ ավելի փորձագետներ, որոնք նշանակվել կամ հաստատվել են դատական կամ վարչական մարմնի կողմից, ուսումնասիրում են միաձուլման նախնական պայմանները և բաժնետերերի համար կազմում են գրավոր զեկույց: Այնուամենայնիվ, անդամ պետությունների օրենքներով կարող է նախատեսվել մեկ կամ ավելի անկախ փորձագետների նշանակում բոլոր միաձուլվող ընկերությունների համար, եթե, վերջիններիս համատեղ դիմումի համաձայն, նրանց նշանակում է դատական կամ վարչական մարմինը: Անդամ պետություններում գործող օրենքների դրույթներից կախված՝ նշված փորձագետները կարող են լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, ընկերություններ կամ ֆիրմաներ:

2. 1-ին պարբերությունում նշված զեկույցում փորձագետները պետք է ամեն դեպքում նշեն իրենց կարծիքը բաժնետոմսերի փոխարկման հարաբերակցության արդար և իրատեսական լինելու մասին: Զեկույցում նրանք պետք է առնվազն՝

ա) նշեն այն մեթոդը կամ մեթոդները, որոնք օգտագործվել են բաժնետոմսերի փոխարկման առաջարկված հարաբերակցությանը հանգելու համար.

բ) հայտնեն, թե արդյոք նշված մեթոդը կամ մեթոդները համապատասխանում են տվյալ դեպքին, նշեն այն արժեքները, որ ստացել են յուրաքանչյուր նման մեթոդի կիրառմամբ և ներկայացնեն եզրակացություն որոշված արժեքին հասնելու համար կիրառված նման մեթոդներին տրված համեմատական կարևորության մասին:

Զեկույցում նկարագրվում է նաև գնահատման գործընթացում առաջացած ցանկացած հատուկ դժվարություն:

3. Յուրաքանչյուր փորձագետ պետք է իրավունք ունենա միաձուլվող ընկերություններից ստանալ համապատասխան բոլոր տեղեկություններն ու փաստաթղթերը և կատարել բոլոր անհրաժեշտ ուսումնասիրությունները:

Հոդված 11

1. Բոլոր բաժնետերերը պետք է իրավունք ունենան գտնվելու վայրում ուսումնասիրելու առնվազն հետևյալ փաստաթղթերը միաձուլման նախնական պայմանների վերաբերյալ որոշում կայացնելու համար ընդհանուր ժողովի հրավիրման համար սահմանված օրվանից առնվազն մեկ ամիս առաջ՝

ա) միաձուլման նախնական պայմանները,

բ) միաձուլվող ընկերությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան զեկույցները նախորդ երեք ֆինանսական տարիների համար,

գ) հաշվապահական հաշվետվություն (հայտարարագիր)՝ կազմված այն օրվա դրությամբ, որը չպետք է լինի ավելի վաղ, քան միաձուլման նախնական պայմանները կազմելու ամսաթվին նախորդող երրորդ ամսվա առաջին օրը, եթե տարեկան ամենավերջին ֆինանսական հաշվետվությունները վերաբերում են այն ֆինանսական տարվան, որն ավարտվել է այդ օրվանից ավելի քան վեց ամիս առաջ,

դ) միաձուլվող ընկերությունների վարչական կամ կառավարման մարմինների՝ 9-րդ հոդվածով նախատեսված զեկույցները,

ե) 10-րդ հոդվածով նախատեսված զեկույցները:

2. Պարբերություն 1 «գ»-ով նախատեսված հաշվապահական հաշվետվությունը կազմվում է վերջին տարեկան հաշվապահական հաշվեկշռում կիրառված միևնույն մեթոդների ու սխեմաների կիրառմամբ:

Այնուամենայնիվ, անդամ պետության օրենքներով կարող է նախատեսվել, որ

ա) անհրաժեշտ չէ կրկին կատարել գույքագրում.

բ) վերջին հաշվապահական հաշվառման գրանցամատյանում ներկայացված գնահատումները փոփոխվում են միայն հաշվապահական գրքերում կատարված մուտքերն արտացոլելու նպատակով. այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել հետևյալը՝

-միջանկյալ ժամանակահատվածում մաշվածությունը և պաշարները,

- հաշվապահական գրքերում չարտացոլված իրական արժեքի էական փոփոխությունները:

3. Յուրաքանչյուր բաժնետեր պետք է իրավունք ունենա, իր դիմումի համաձայն և անվճար, ստանալու 1-ին պարբերությունում նշված ամբողջ փաստաթղթերի կամ, ցանկության դեպքում, դրանց մի մասի պատճենները:

Հոդված 12

Միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի աշխատողների իրավունքների պաշտպանությունը կարգավորվում է թիվ 77/187/ԵՏՀ հրահանգի համաձայն:

Հոդված 13

1. Անդամ պետությունների օրենքներով պետք է նախատեսվի միաձուլվող ընկերությունների պարտատերերի շահերի պաշտպանության պատշաճ համակարգ, որոնց պահանջները ներկայացվել են միաձուլման նախնական պայմանների հրապարակումից առաջ և դրանց գործողության ժամկետը չի լրացել հրապարակման պահին:

2. Այս նպատակով անդամ պետությունների օրենքներով առնվազն նախատեսվում է, որ նշված պարտատերերը պետք է ունենան համապատասխան երաշխիքներ, երբ միաձուլվող ընկերությունների ֆինանսական վիճակը անհրաժեշտ է դարձնում նման պաշտպանությունը և, երբ նշված պարտատերերը դեռևս չունեն նման երաշխիքներ:

3. Ձեռք բերող ընկերության և ձեռք բերվող ընկերության պարտատերերի համար նշված պաշտպանության ձևերը կարող են տարբեր լինել:

Հոդված 14

Չսահմանափակելով իրենց իրավունքների կոլեկտիվ իրականացումը կարգավորող նորմերի գործողությունը՝ 13-րդ հոդվածը տարածվում է միաձուլվող ընկերությունների չապահովված պարտատոմսերի սեփականատերերի վրա, բացառությամբ, երբ միաձուլումը հաստատվել է վերջիններիս ժողովի կողմից, եթե նման ժողովը նախատեսվում է ներպետական օրենքներով կամ չապահովված պարտատոմսերի սեփականատերերի կողմից՝ անհատապես:

Հոդված 15

Բաժնետոմսերից բացի հատուկ իրավունքներ վերապահող այլ արժեթղթերի սեփականատերերին պետք է ձեռք բերող ընկերությունում շնորհվեն առնվազն միևնույն իրավունքները, ինչ նրանք ունեն ձեռք բերվող ընկերությունում, բացառությամբ, երբ իրավունքների փոփոխությունը հաստատվում է նման արժեթղթերի սեփականատերերի ժողովի կողմից, եթե նման ժողովը նախատեսվում է ներպետական օրենքներով, կամ արժեթղթերի սեփականատերերի կողմից անհատապես, կամ երբ արժեթղթերի սեփականատերերն իրավունք ունեն վաճառելու իրենց արժեթղթերը ձեռք բերող ընկերությանը:

Հոդված 16

1. Եթե անդամ պետության օրենքներով չի նախատեսվում միաձուլումների օրինականության նկատմամբ դատական կամ վարչական կանխարգելիչ վերահսկողություն կամ, եթե նման վերահսկողությունը չի տարածվում միաձուլումների համար անհրաժեշտ բոլոր իրավական ակտերի վրա, միաձուլման վերաբերյալ որոշում կայացնելու համար հրավիրված ընդհանուր ժողովի արձանագրությունները և, անհրաժեշտության դեպքում, նշված ընդհանուր ժողովներից հետո կնքվող միաձուլման պայմանագիրը կազմվում և վավերացվում է պատշաճ իրավական ընթացակարգով: Այն դեպքերում, երբ միաձուլումն անհրաժեշտ չէ հաստատել միաձուլվող բոլոր ընկերությունների ընդհանուր ժողովների կողմից, միաձուլման նախնական պայմանները պետք է կազմվեն և վավերացվեն պատշաճ իրավական ընթացակարգով:

2. Նոտարը կամ փաստաթուղթը պատշաճ իրավական ընթացակարգով կազմելու և վավերացնելու իրավասություն ունեցող մարմինը պետք է ստուգի և վավերացնի այն ընկերությունից պահանջվող իրավական ակտերի և ձևականությունների, ինչպես նաև միաձուլման նախնական պայմանների առկայությունը և վավերությունը, որի անունից նա կամ այդ մարմինը գործում է:

Հոդված 17

Անդամ պետությունների օրենքներով սահմանվում է միաձուլումն ուժի մեջ մտնելու օրը:

Հոդված 18

1. Միաձուլվող ընկերություններից յուրաքանչյուրի վերաբերյալ միաձուլման մասին տեղեկությունները պետք է հրապարակվեն յուրաքանչյուր անդամ պետության օրենքներով սահմանված կարգով՝ համաձայն թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի:

2. Ձեռք բերող ընկերությունը կարող է ինքն իրականացնել ձեռք բերվող ընկերության կամ ընկերությունների հետ կապված հրապարակման ընթացակարգերը:

Հոդված 19

1. Ընկերությունների միաձուլումը պետք է, օրենքի ուժով և միաժամանակ, ունենա հետևյալ հետևանքները՝

ա) ձեռք բերվող ընկերության բոլոր ակտիվների և պարտավորությունների փոխանցումը ձեռք բերող ընկերությանը՝ ինչպես ձեռք բերվող և ձեռք բերող ընկերությունների միջև, այնպես էլ երրորդ անձանց դեպքում.

բ) ձեռք բերվող ընկերության բաժնետերերը դառնում են ձեռք բերող ընկերության բաժնետերեր.

գ) ձեռք բերվող ընկերության գոյությունը դադարում է:

2. Ձեռք բերվող ընկերության ոչ մի բաժնետոմս, որը պատկանում է կամ ա) ձեռք բերող ընկերությանը կամ իր անունից, սակայն ընկերության կողմից գործող անձին, կամ բ) ձեռք բերվող ընկերությանը կամ իր անունից, սակայն ընկերության կողմից գործող անձին, չի փոխարկվում ձեռք բերող ընկերության բաժնետոմսի:

3. Վերը նշվածը չի ազդում անդամ պետությունների օրենքների վրա, որոնցով պահանջվում է հատուկ ընթացակարգերի պահպանում, որպեսզի ձեռք բերվող ընկերության որոշ ակտիվների, իրավունքների և պարտավորությունների փոխանցումը գործի երրորդ անձանց նկատմամբ: Ձեռք բերող ընկերությունը կարող է ինքն իրականացնել այդ ընթացակարգերը. այնուամենայնիվ, անդամ պետությունների օրենքները կարող են թույլ տալ, որ ձեռք բերվող ընկերությունը շարունակի իրականացնել այդ ընթացակարգերը սահմանափակ

Ժամանակահատվածում, որը, բացառությամբ բացառիկ դեպքերի, չի կարող գերազանցել միաձուլումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո վեց ամիսը:

Հոդված 20

Անդամ պետությունների օրենքներն առնվազն սահմանում են նորմեր, որոնք, միաձուլումը նախապատրաստելիս և իրականացնելիս, կարգավորում են ձեռք բերվող ընկերության վարչական կամ կառավարման մարմինների անդամների թույլ տված խախտումների համար այդ մարմինների անդամների քաղաքացիական պատասխանատվությունը ձեռք բերվող ընկերության բաժնետերերի նկատմամբ:

Հոդված 21

Անդամ պետությունների օրենքներն առնվազն սահմանում են նորմեր, որոնք կարգավորում են, ձեռք բերվող ընկերության անունից հոդված 10«1»-ում նշված զեկույցը կազմելու համար պատասխանատու փորձագետների՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում թույլ տված խախտումների համար քաղաքացիական պատասխանատվությունը ձեռք բերվող ընկերության բաժնետերերի նկատմամբ:

Հոդված 22

1. Անդամ պետությունների օրենքներով միաձուլման անվավերության մասին նորմեր կարող են սահմանվել միայն հետևյալ պայմաններով՝

ա) անվավերությունը պետք է ճանաչվի դատարանի վճռով,

բ) 17-րդ հոդվածի համաձայն ուժի մեջ մտած միաձուլումը կարող է առոչինչ ճանաչվել, միայն եթե դատական կամ վարչական կանխարգելիչ վերահսկողություն չի իրականացվել դրա օրինականության նկատմամբ, կամ, եթե այն չի նախապատրաստվել և հաստատվել պատշաճ իրավական ընթացակարգով, կամ, եթե պարզ է դարձել, որ ընդհանուր ժողովի որոշումն առոչինչ է կամ վիճարկելի՝ ներպետական իրավունքի համաձայն.

գ) անվավերության վարույթ չի կարող հարուցվել անվավեր ճանաչելու պահանջ ներկայացրած անձի նկատմամբ միաձուլումն ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո, կամ, եթե շտկվել է ստեղծված իրավիճակը.

դ) եթե հնարավոր է շտկել այն թերությունը, որը կարող է հանգեցնել միաձուլման անվավերության, իրավասու դատարանը ներգրավված ընկերություններին իրավիճակը շտկելու նպատակով ժամանակ է տալիս.

ե) միաձուլումն առոչինչ ճանաչող դատարանի վճիռը հրապարակվում է յուրաքանչյուր անդամ պետության օրենքներով սահմանված կարգով՝ թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն.

զ) եթե անդամ պետությունների օրենքները թույլ են տալիս երրորդ անձին վիճարկելու դատարանի վճիռը, նա կարող է դա անել թիվ 68/151/ԵՏՀ հրահանգով սահմանված կարգով վճռի հրապարակումից վեց ամսվա ընթացքում միայն.

է) միաձուլումն առոչինչ ճանաչող դատարանի վճիռը չպետք է ազդի ձեռք բերող ընկերության ստանձնած կամ դրան վերաբերող պարտավորությունների վավերության վրա, որոնք ծագել են մինչև դատարանի վճռի հրապարակումը և 17-րդ հոդվածում նշված օրվանից հետո.

ը) միաձուլմանը մասնակից ընկերությունները համապարտ և բաժնային պարտասխանատվություն են կրում ձեռք բերող ընկերության՝ (է) կետում նշված պարտավորությունների համար:

2. Պարբերություն 1 «ա»-ի դրույթներից շեղման կարգով՝ անդամ պետության օրենքները կարող են նախատեսել նաև միաձուլման անվավերության մասին որոշման ընդունում վարչական մարմնի կողմից, եթե այդ որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով: «բ», «դ», «ե», «զ», «է» և «ը» ենթապարբերությունները համանման եղանակով տարածվում են վարչական մարմնի վրա: Անվավերության այդպիսի վարույթները չեն կարող հարուցվել 17-րդ հոդվածով նախատեսված օրվանից վեց ամիս հետո:

3. Վերը նշվածը չի ազդում միաձուլման անվավերության մասին անդամ պետությունների օրենքների վրա, եթե անվավերությունը հայտարարվել է միաձուլման օրինականության նկատմամբ դատական կամ վարչական կանխարգելիչ վերահսկողությունից բացի ցանկացած այլ տեսակի վերահսկողություն իրականացնելուց հետո:

ԳԼՈՒԽ III Միաձուլումը նոր ընկերություն ստեղծելու միջոցով

Հոդված 23

1. 5-րդ, 6-րդ, 7-րդ և 9-ից 12-րդ հոդվածները, չսահմանափակելով թիվ 68/151/ԵՏՀ հրահանգի 11-րդ և 12-րդ հոդվածների գործողությունը, տարածվում են նոր ընկերություն ստեղծելու

միջոցով միաձուլման վրա: Այդ նպատակով «միաձուլվող ընկերություններ» և «ձեռք բերվող ընկերություն» նշանակում են այն ընկերությունները, որոնց գոյությունը դադարում է և «ձեռք բերող ընկերություն» նշանակում է նոր ընկերություն:

2. Հոդված 5«2»«ա»-ն կիրառվում է նաև նոր ընկերության նկատմամբ:

3. Միաձուլման նախնական պայմանները և նոր ընկերության հիմնադիր պայմանագիրը կամ հիմնադիր պայմանագրի նախագիծը և կանոնադրությունը, կամ կանոնադրության նախագիծը, եթե դրանք կազմված են առանձին փաստաթղթերով, հաստատվում են՝ իրենց գոյությունը դադարեցնող ընկերություններից յուրաքանչյուրի ընդհանուր ժողովի կողմից:

4. Անդամ պետությունները կարող են նոր ընկերության ստեղծման նկատմամբ չկիրառել թիվ 77/91/ԵՏՀ հրահանգի 10-րդ հոդվածով սահմանված դրամից բացի փոխհատուցման ցանկացած այլ եղանակով ստուգումը կարգավորող նորմերը:

ԳԼՈՒԽ IV Ընկերության ձեռքբերումը դրա բաժնետոմսերի 90 կամ ավելի տոկոսի սեփականատեր մեկ այլ ընկերության կողմից

Հոդված 24

Անդամ պետությունները իրենց օրենքներով կարգավորվող ընկերությունների համար նախատեսում են դրույթներ՝ ապահովելու առանց լուծարման գործընթացի իրենց գործունեությունը դադարեցնող մեկ կամ ավելի ընկերությունների կողմից բոլոր ակտիվների ու պարտավորությունների փոխանցումը մեկ այլ ընկերության, որն ընդհանուր ժողովում ձայնի իրավունք տվող նրանց բոլոր բաժնետոմսերի և այլ արժեթղթերի սեփականատերն է: Նշված գործողությունները կարգավորվում են II գլխի դրույթներով՝ բացառությամբ հոդվածներ 5«2»«բ», «գ» և «դ»-ի, 9, 10, 11 «1» «դ» և «ե»-ի, 19 «1» «բ»-ի, 20 և 21-ի:

Հոդված 25

Անդամ պետությունները կարող են չկիրառել 7-րդ հոդվածը 24-րդ հոդվածով սահմանված գործողությունների նկատմամբ, եթե բավարարված են առնվազն հետևյալ պահանջները՝

ա) 6-րդ հոդվածով նախատեսված հրապարակումը գործողության մեջ ներգրավված յուրաքանչյուր ընկերության մասով պետք է իրականացվի գործողության իրականացումից առնվազն մեկ ամիս առաջ.

բ) գործողության իրականացումից առնվազն մեկ ամիս առաջ ձեռք բերող ընկերության բոլոր բաժնետերերը պետք է իրավունք ունենան ընկերության գտնվելու վայրում ուսումնասիրելու հոդված 11 «1»«ա»«բ» և «գ»-ով սահմանված փաստաթղթերը: Պետք է կիրառվեն հոդված 11«2» և «3»-ը,

գ) Պետք է կիրառվի հոդված 8«գ»-ն:

Հոդված 26

Անդամ պետությունները կարող են կիրառել 24-րդ և 25-րդ հոդվածներն այն գործողությունների նկատմամբ, որոնցով մեկ կամ ավելի ընկերությունների գործունեությունը դադարում է առանց լուծարման գործընթացի, և նրանց բոլոր ակտիվներն ու պարտավորությունները փոխանցվում են մեկ այլ ընկերության, եթե ձեռք բերվող ընկերության կամ ընկերությունների՝ 24-րդ հոդվածում նշված բոլոր բաժնետոմսերի և այլ արժեթղթերի սեփականատերը ձեռք բերող ընկերությունն է և (կամ) այն անձինք, որոնք այդ բաժնետոմսերի և արժեթղթերի սեփականատերն են իրենց անունից, սակայն ձեռք բերող ընկերության կողմից:

Հոդված 27

Միաձուլման դեպքում, երբ մեկ կամ ավելի ընկերություններ ձեռք են բերվում մեկ այլ ընկերության կողմից, որն այդ ընկերություններից յուրաքանչյուրի ընդհանուր ժողովում ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի և այլ արժեթղթերի 90 կամ ավելի տոկոսի, սակայն ոչ ամբողջի, սեփականատերն է, անդամ պետությունները կարող են չպահանջել ձեռք բերող ընկերության ընդհանուր ժողովի կողմից միաձուլման հաստատումը՝ պայմանով, որ բավարարված են առնվազն հետևյալ պայմանները՝

ա) 6-րդ հոդվածով նախատեսված հրապարակումը ձեռք բերող ընկերության մասով պետք է իրականացվի միաձուլման նախնական պայմանների շուրջ որոշում կայացնելու նպատակով ձեռք բերվող ընկերության կամ ընկերությունների ընդհանուր ժողովի հրավիրման համար սահմանված օրվանից առնվազն մեկ ամիս առաջ.

բ) «ա» կետով սահմանված օրվանից առնվազն մեկ ամիս առաջ ձեռք բերող ընկերության բոլոր բաժնետերերը պետք է իրավունք ունենան ընկերության գտնվելու վայրում ուսումնասիրելու հոդված 11«1»«ա», «բ» և «գ»-ով սահմանված փաստաթղթերը: Պետք է կիրառվեն հոդված 11«2» և «3»-ը.

գ) պետք է կիրառվի հոդված 8«գ»-ն:

Հոդված 28

Անդամ պետությունները կարող են չկիրառել 9-րդ և 11-րդ հոդվածները, 27-րդ հոդվածի իմաստով, միաձուլման նկատմամբ, եթե բավարարված են առնվազն հետևյալ պայմանները՝ ա) ձեռք բերվող ընկերության փոքրամասնություն կազմող բաժնետերերը պետք է ձեռք բերող ընկերության կողմից իրենց բաժնետոմսերի ձեռքբերման իրավունք ունենան.

բ) եթե նրանք իրականացնում են այդ իրավունքը, ապա պետք է իրավունք ունենան ստանալու իրենց բաժնետոմսերի արժեքին համապատասխան փոխհատուցում.

գ) նշված փոխհատուցման հետ կապված որևէ անհամաձայնության դեպքում՝ փոխհատուցման արժեքը պետք է հնարավոր լինի որոշել դատական կարգով:

Հոդված 29

Անդամ պետությունները կարող են կիրառել 27-րդ և 28-րդ հոդվածներն այն գործողությունների նկատմամբ, որոնց միջոցով մեկ կամ ավելի ընկերությունների գործունեությունը դադարում է առանց լուծարման գործընթացի, և նրանց բոլոր ակտիվներն ու պարտավորությունները փոխանցվում են մեկ այլ ընկերության, եթե ձեռք բերվող ընկերության կամ ընկերությունների՝ 27-րդ հոդվածում նշված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի 90 կամ ավելի տոկոսի, սակայն ոչ ամբողջի, սեփականատերը ձեռք բերող ընկերությունն է և (կամ) այն անձինք, որոնք այդ բաժնետոմսերի և արժեթղթերի սեփականատերն են իրենց անունից, սակայն ընկերության կողմից:

ԳԼՈՒԽ V. Միաձուլում համարվող այլ գործողությունները

Հոդված 30

Եթե 2-րդ հոդվածում նշված գործողություններից մեկի իրականացման դեպքում անդամ պետության օրենքները թույլ են տալիս 10%-ը գերազանցող կանխիկ վճարում, կիրառվում են II և III գլուխները, ինչպես նաև 27-րդ, 28-րդ և 29-րդ հոդվածները:

Հոդված 31

Եթե անդամ պետության օրենքները թույլ են տալիս իրականացնել 2-րդ, 24-րդ և 30-րդ հոդվածներում նշված գործողություններից մեկը և այդ կերպ ոչ բոլոր փոխանցող ընկերություններն են դադարեցնում իրենց գոյությունը, ապա, ըստ անհրաժեշտության, կիրառվում են II գլուխը, բացառությամբ դրա հոդված 19«1»«գ»-ի, III կամ IV գլուխները:

ԳԼՈՒԽ VI. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 32

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգը կատարելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը (այլ նորմատիվ իրավական ակտերը) և վարչական ակտերը դրանց մասին ծանուցելուց հետո երեք տարվա ընթացքում: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Այնուամենայնիվ, 1-ին պարբերությունում նշված ակտերը Միացյալ Թագավորությունում և Իռլանդիայում չգրանցված ընկերությունների նկատմամբ կիրառելը կարող է հետաձգվել այդ ակտերն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարի ժամկետով:

3. Անդամ պետությունները կարող են չկիրառել 13-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածները փոխարկելի չապահովված պարտատոմսերի և փոխարկելի այլ արժեթղթերի նկատմամբ, եթե 1-ին պարբերության մեջ նշված օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ միաձուլման դեպքում նշված անձանց դիրքը նախապես որոշված է եղել թողարկման պայմաններով:

4. Անդամ պետությունները կարող են չկիրառել սույն Հրահանգը այն միաձուլումների կամ միաձուլում համարվող գործողությունների նկատմամբ, որոնց նախապատրաստման կամ իրականացման համար ներպետական իրավունքով պահանջվող գործողությունը կամ ձևականությունն արդեն կատարվել է 1-ին պարբերությունում նշված ակտերն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ:

Հոդված 33

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 1978 թվականի հոկտեմբերի 9-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ Հ.-Ջ. Ֆոգել